

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ 106-ԱՄՅԱԿԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ 106 ԱՆԴԱՄՈՎ

07.12.2024 12:30



Դեկտեմբերի 6-ին փաստաբանական համայնքը տոնեց մասնագիտական օրն ու Հայաստանում փաստաբանության հիմնադրման 106-ամյակը:

Միջոցառումը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության օրհներգով:

Այնուհետև, հանդիսատեսը դիտեց հոլովակ, որում հակիրճ ամփոփված էր Հայաստանում փաստաբանության հիմնադրման և զարգացման պատմությունը:

Ողջույնի խոսքով հանդես եկան Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Փաստաբանական ակադեմիայի ղեկավար Արա Զոհրաբյանը:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցավ նաև Փաստաբանների պալատի արտոնագրերի շնորհման խորհրդի հանդիսավոր նիստ:

Նիստի մեկնարկին շնորհավորական ուղերձներով ամբիոնից ելույթ ունեցան նաև Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Մարինե Ֆարմանյանը, Գայանե Դեմիրջյանը և Կարեն Մեժլումյանը:

Շնորհակալական խոսքով հանդես եկան նաև հավակնորդներ Աննա Ստեփանյանը և Ապրես Գրիգորյանը:

Փաստաբանության 106-ամյակին, Փաստաբանների պալատի խորհրդի առաջ հանդիսավոր երդումից հետո, հավակնորդները ստացան փաստաբանական գործունեության արտոնագրեր:

Խորհրդանշական զուգադիպությամբ

Փաստաբանների պալատը համալրվեց ևս 106 անդամով:

Փաստաբանների պալատի նախագահի կողմից

պատվոգրերով և շնորհակալագրերով

պարգևատրվեցին մի շարք գործընկերներ՝

փաստաբանության առջև ծառացած խնդիրների ու

մարտահրավերների հաղթահարմանն ուղղված

միջոցառումներին օժանդակելու, ինստիտուտի

պաշտպանությանը նպաստելու, մասնագիտական

աջակցություն ցուցաբերելու և հանրային

պաշտպանությանն օժանդակելու համար:

Երեկոյի մշակութային հատվածը ներառում էր

երաժշտական կատարումներ, որի ընթացքում ելույթ ունեցավ նաև երգիչ Վահագ Ռաշը:

